



ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԼՐԱԹԵՐԹ

Հունվար-հունիս, 2023թ.

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնն (ՍԲԾԿ) իր գործունեությունը սկսել է 2008թ.-ից և աշխատում է 3 հիմնական ուղղություններով.

- **Ծառայությունների մատուցում.** մասնագիտացված սոցիալական, հոգեբանական և իրավաբանական աջակցության տրամադրում սեռական բռնության ենթարկված անձանց: 24/7 ռեժիմով գործում է նաև թեժ գծի ծառայությունը (+37477991280):
- **Իրազեկում.** ՍԲԾԿ-ն իրականացնում է իրազեկման լայնամասշտաբ աշխատանքներ և մասնագիտացված վերապատրաստումներ: Իր գործունեության 15 տարիների ընթացքում իրականացրել է ավելի քան 30 հանրային արշավ և վերապատրաստումներ ՀՀ բոլոր մարզերի մարզպետարանների, ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի աշխատակիցների, սոցիալական աշխատողների, հոգեբանների, իրավաբանների և այլ մասնագետների համար:
- **Շահերի պաշտպանություն.** ՍԲԾԿ-ի նպատակն է սեռական բռնության հիմնախնդրի հանդեպ վերաբերմունքը դարձնել առավել գենդերազգայուն՝ մասնավորապես նպաստելով դատաիրավական համակարգի կողմից զրհակենտրոն մոտեցման ներդրմանը, դարձնել օրենսդրական համակարգն առավել հասցեական:



«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ

📍 Հայաստան, 0009, Երևան, Բաղրամյան 50գ, բն.2

✉ sacc.arm@gmail.com

☎ +37498991280

Թեժ գիծ՝ +37477991280

2023 թվականի հունվարից հունիս ընկած

ժամանակահատվածում

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը հանձն է առել 19 նոր դեպքի վարում. շահառուներից 18-ը իգական, 1-ը արական սեռի անձինք են. ընդհանուրից 9-ը՝ անչափահաս:

Շահառուների մի մասը կապ է հաստատել մեզ հետ թեժ գծի միջոցով, մյուսներն էլ ուղղորդվել են քննչական կոմիտեի կամ ՍԲԾԿ գործունեությանը ծանոթ անձանց/հասարակական կազմակերպության կողմից:

Շահառուներին տրամադրված ծառայությունները

Բոլոր շահառուներին տրամադրվել է խորհրդատվություն սոցիալական աշխատողի կողմից, անչափահասների պարագայում հանդիպում է տեղի ունեցել նաև խնամողի կամ խնամքի հաստատության մասնագետների հետ:

Շահառուներից 1-ին տրամադրվել է փաստաբանական խորհրդատվություն, սակայն հետագա ընթացք չի տրվել, քանի որ շահառուի ծնողը որոշել է չդիմել ոստիկանություն՝ ավելորդ քաջջութից խուսափելու համար, իսկ շահառուներից 4-ի դեպքով հարուցվել է քրեական գործ, որոնցից 2-ը այս պահին գտնվում են նախաքննության փուլում, իսկ մյուս 2-ի գործով դատական պրոցեսն արդեն սկսվել է:

Շահառուներից 5-ը ներկայումս շարունակում են ստանալ հոգեբանական աջակցություն մասնագետների կողմից (ընդհանուր՝ 21 հանդիպում). ևս մեկ շահառու առաջիկայում կուղղորդվի հոգեբանի մոտ:

Այս ընթացքում շարունակվում են նաև նախկինում ՍԲԾԿ դիմած շահառուների դեպքերով ընթացակարգերը, մի քանիսն արդեն գտնվում են ավարտական փուլում, 2-ի գործով ունենք մեղադրական վճիռ:

Հոգեբանական աջակցությունը նախկինում դիմած շահառուների հետ ևս շարունակվում է:

Իրազեկման աշխատանքները (մաս 1)



2023թ.-ի առաջին կիսամյակում ՄԲԾԿ մասնագետներն իրականացրել են իրազեկիչ մի շարք հանդիպումներ, որոնք եղել են ինչպես կառույցի ծրագրերի շրջանակում, այնպես էլ դրանից դուրս:

Տեղի են ունեցել հանդիպումներ **ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանք բաժնի հեռակա և առկա կրթություն ստացող ուսանողների հետ**, որոնց ընթացքում նրանց ներկայացվել են ինչպես սեռական բռնության հիմնախնդրի առանձնահատկությունները, այնպես էլ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները սեռական բռնության ենթարկված անձի հետ աշխատանքում:

«PINK» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում հանդիպումներ են իրականացվել ԼԳԲՏ+ անձանց տարբեր խմբերի հետ՝ քննարկելու սեռական բռնության հիմնախնդիրը և ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ սեռական բռնության առանձնահատկությունները, գենդերային հիմքը:

UNFPA-ի նախաձեռնությամբ և Արագածոտնի մարզպետի առաջարկով՝ հանդիպումներ են տեղի ունեցել **մարզում գործող սոցիալական ոլորտի մասնագետների հետ**՝ քննարկելու այնպիսի թեմաներ, ինչպիսիք են սեռական բռնության հիմնախնդիրը, տեսակներն ու հետևանքները, սեռական բռնության ենթարկված անձի աջակցության առանձնահատկությունները, սեռական բռնության՝ որպես երևույթի գենդերային հիմքը՝ պատրաստելով մասնագետներին առավել զգայուն, զոհակենտրոն, կրկնազոհականացումից զերծ մասնագիտական ծառայություն մատուցելուն:

Իրազեկման աշխատանքները (մաս 2)



Հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել նաև **Լոռու մարզում գործող կանանց հիմնահարցերով զբաղվող կառույցի մասնագետների հետ**, որոնց ընթացքում նրանց ներկայացվել են շահառուների հետ աշխատանքի առանձնահատկությունները դեպքի վարման ընթացքում:

“Home care” տարեցների խնամքով զբաղվող ընկերության հրավերով ՄԲԾԿ մասնագետը մի քանի հանդիպումների շրջանակում **խնամքով զբաղվող շուրջ 90 մասնագետների հետ** խոսել է սեռական ոտնձգության հիմնախնդրից, քանի որ, ըստ ընկերության ղեկավարության, այս հիմնախնդիրը շատ տարածված է տարեցների խնամք իրականացնող մասնագետների շրջանում, մինչդեռ նրանք հաճախ չեն ճանաչում երևույթը. կառույցն էլ չունի ոտնձգության պարագայում արձագանքելու համապատասխան մեխանիզմ:

ՄԲԾԿ ուղղորդմամբ՝ կառույցը մշակեց գործիք, որը հնարավորություն կտա խնամողներին բարձրաձայնել իրենց հետ տեղի ունեցող ոտնձգության կամ սեռական բռնության այլ ձևերի մասին, ինչպես նաև բարդ դեպքերի քննարկմամբ հնարավոր եղավ դժվարին իրավիճակին լուծում տալ:



Իրազեկման աշխատանքները (մաս 3)



ՄԲՃԿ թիմի ադվոկացիայի մասնագետը մասնակցել է **“Не виновата” ամենամյա միջազգային բարեգործական փառատոնին**, որն աջակցում է ընտանեկան և սեռական բռնություն վերապրած անձանց: Փառատոնն իր մեջ ընդգրկում էր տարբեր միջոցառումներ, հանրային զրույցներ, ստենդ-ափ, ֆիլմի ցուցադրություն և դասախոսություններ ֆեմինիստական տարբեր թեմաներով: ՄԲՃԿ-ն հանդես եկավ «Սեռական բռնությունը Հայաստանում» խորագիրը կրող ելույթով և պատմեց Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի մասին, կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունների և սեռական բռնության վերաբերյալ վիճակագրության մասին: Խոսվեց նաև կարևոր և արդիական թեմաների շուրջ, օրինակ, թե ինչ է սեռական բռնությունը, ինչպես պաշտպանվել և ինչպես դիմել օգնության սեռական բռնության ենթարկվելու դեպքում:

Փառատոնից ստացված հասույթի կեսը փոխանցվեց Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնին:

Իրազեկումը սոցիալական հարթակներում

Ապրիլը սեռական բռնության դեմ պայքարի ամիսն է. 2023թ.-ի ապրիլին ՄԲՃԿ իրազեկման քարոզարշավն ուղղված է եղել նրան, թե ինչպես աջակցել սեռական բռնության ենթարկված մտերիմիդ:



Սեռական բռնության ենթարկված մտերիմիդ ԼՍԻՐ՝ վստահելով և առանց քննադատելու

- Միշտ հիշի՛ր և նրան ասա՛, որ կատարվածում նա մեղավոր չէ. սեռական բռնության մեղավորը միայն և միշտ բռնարարն է:

#ինչպես_աջակցես_սեռական_բռնության_ենթարկված_մտերիմիդ



Սեռական բռնության ենթարկված մտերիմիդ ԼՍԻՐ՝ խոսելու հնարավորություն տալով և համբերությամբ

- Խոսելու նրա հերթն է. տու՛ր նրան անհրաժեշտ տարածքը, որ խոսի:
- Եղի՛ր համբերատար և հասկացող. վերականգնումը ժամանակ է պահանջում:

#ինչպես_աջակցես_սեռական_բռնության_ենթարկված_մտերիմիդ



Սեռական բռնության ենթարկված մտերիմիդ ԼՍԻՐ՝ չմոռանալով սեփական ինքնախնամքի մասին

- Սեռական բռնության տրավմայի հաղթահարմանն աջակցելը կարող է բավական ռեսուրսատար լինել քեզ համար. չմոռանա՛ս հոգ տանել նաև ինքդ քո մասին:

#ինչպես_աջակցես_սեռական_բռնության_ենթարկված_մտերիմիդ

Ապրիլի միջոցառումները

2023թ.-ի հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում ՄԲԿԿ թերևս ամենանշանակալից միջոցառումը ապրիլի 19-ին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Սեռական բռնության հիմնախնդիրը Հայաստանում. առկա հիմնահարցերը և դրանց հաղթահարմանն ուղղված համատեղ քայլերը» կլոր սեղան քննարկումն էր և դրան հաջորդող՝ «Սեռական բռնության թանգարան» խորագրով պատմությունների ցուցահանդեսի մեկնարկը, որը հաջորդող 10 օրերի ընթացքում շարունակեց ցուցադրվել ՄԲԿԿ գրասենյակում, ինչպես նաև, Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ, ՀՀ տարբեր մարզերում: «Սեռական բռնության թանգարանի» նպատակը, նախ, սեռական բռնության և ոտնձգության դեպքերով կիսվելն էր, այնուհետ հիմնախնդիրների մասին ևս մեկ անգամ բարձրաձայնելը, լուծման կարևորությունը շեշտադրելը: Այս տարի ցուցահանդեսում ներկայացված էին սեռական բռնության 21 իրական պատմություն:



Թեմատիկ հանդիպումները



Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը վայր է, որը հյուրընկալում և համախմբում է մարդկանց կարևոր քննարկումների շուրջ՝ ապահով տարածք հանդիսանալով և լսելի դարձնելով ներկաներից յուրաքանչյուրի կարծիքը: 2023 թվականի հունվարից ՄԲՃԿ-ի տարածքը հյուրընկալել է ավելի քան 100 հոգու՝ քննարկելու այնպիսի կարևոր հարցեր և թեմաներ, ինչպիսիք են՝ «Ինչպե՞ս աջակցել սեռական բռնության ենթարկված ընկերոջը», «Առողջ սեռական հարաբերություններ», «Ինչպե՞ս պաշտպանել երեխային սեռական բռնությունից», «Ծնողավարման ոճերը. ինչու՞ են դրանք կարևոր երեխա դաստիարակելիս», «Կարգապահության հաստատումը երեխաների հետ շփման գործընթացում» և շատ ուրիշները, ինչպես նաև «Ինքնապաշտպանության դասընթաց՝ կանանց համար»: Բոլոր հանդիպումները վարել են Հայաստանում տվյալ ոլորտի առաջատար մասնագետները:



Ցանցային ակտիվությունը

Վիեննա, հուլիս, 2023



2018թ.-ից Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը հանդիսանում է «Կանայք Ընդդեմ Բռնության Եվրոպա» ցանցի անդամ, իսկ արդեն 2020թ.-ից ՍԲԾԿ ՀԿ-ն նաև ԿԸԲԵ ցանցի խորհրդի անդամ է:

2023թ.-ի հունվարից շարունակվեց «Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա» ցանցի և ԵԱՀԿ աջակցությամբ դեռևս 2022թ.-ից մեկնարկած ծրագիրն՝ ուղղված պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության կանխարգելմանն ու արձագանքմանը: Այս տարի նպատակ ունենք դասընթացի և ջատագովման միջոցով տարածել «Պատերազմի ընթացքում և հետպատերազմյան պայմաններում գենդերային բռնության կանխարգելում և արձագանքում՝ Կանանց ՀԿ-ների փորձը և առաջարկությունները» գործիքակազմը ազգային մակարդակով՝ դիմելով ՔՀԿ-ներին, տեղական պաշտոնյաներին, և ուղորդման համակարգի համապատասխան դերակատարներին:

2023թ.-ի մայիսին Վիեննայում տեղի ունեցավ ԿԸԲԵ ցանցի տարեկան խորհրդի նիստը, որին մասնակցեց նաև ՍԲԾԿ ՀԿ-ն՝ հանձինս ՀԿ նախագահ Տաթևիկ Աղաբեկյանի:


2023թ.-ի հունիսի 15-ից ՍԲԾԿ-ն պաշտոնապես դարձավ «Տղամարդիկ ներգրավվում են Եվրոպա» ցանցի անդամ, որի նպատակն է փոխակերպել անհավասար իշխանության հարաբերությունները:

Շահերի պաշտպանությունը (մաս 1)

«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» և «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ների համատեղ ջատագովության արդյունքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի նոր փոփոխություններով ամրագրվեց աշխատավայրում սեռական ոտնձգության արգելքը, որն ուժի մեջ է մտնելու հուլիսի ավարտին:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեն դեռևս 2022թ.-ի հոկտեմբերին դիտարկել էր Հայաստանի հերթական՝ յոթերորդ պարբերական զեկույցը, որի հիման վրա ընդունեց եզրափակիչ դիտարկումներ: Հաշվի առնելով նաև մեր կողմից տրամադրված տվյալները՝ Հայաստանին ներկայացրեց համապատասխան առաջարկություններ:

Առաջարկությունների շարքում էր ընդունել այնպիսի օրենսդրություն, որը բացահայտորեն կարգելեր սեռական ոտնձգությունները աշխատավայրում և կապահովեր, որ տուժողներին հասանելի լինեն արդյունավետ պաշտպանության միջոցներ: Ընդ որում, որպեսզի սեռական ոտնձգությունների վերաբերյալ բողոքները արդյունավետորեն քննվեն, առաջարկվել էր նաև, որ սեռական ոտնձգություն կատարած անձինք հետապնդվեն և ստանան համարժեք պատիժ, իսկ ոտնձգության ենթարկված անձինք պաշտպանված լինեն վրեժխնդրությունից: Նշվել էր նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կարևորագույն դերը աշխատավայրերում այս խնդրով կանոնավոր ստուգումներ կատարելու հարցում:



2021թ.-ի մայիսին ընդունված նախագիծը սահմանեց աշխատավայրում սեռական ոտնձգության հասկացությունը, որի համաձայն՝ սեռական ոտնձգությունն աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) սեռական բնույթի անցանկալի արարք է, որն ունի ֆիզիկական կամ խոսքային կամ ոչ խոսքային դրսևորում (ներառյալ՝ սեռական բնույթի առաջարկները, հպումները), և որն ուղղակի կամ անուղղակի ազդում է անձի՝ աշխատանքի վերաբերյալ որոշումների կայացման վրա կամ ստեղծում է արժանապատվությունը նվաստացնող կամ սոցիալական մեկուսացման դրդող աշխատանքային միջավայր:

Շահերի պաշտպանությունը (մաս 2)

Ընդունված նախագիծը սահմանեց նաև գործատուի պարտավորությունը ամրագրել ներքին կարգապահական կանոններում սեռական ոտնձգության արգելքը, ինչպես նաև սեռական ոտնձգության ենթարկված անձանց տրամադրել արտահերթ արձակուրդ: Սա նշանակում է, որ սեռական ոտնձգություն իրականացնողը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

Քաղաքացիները իրավունք ունեն պահանջել իրենց գործատուից կարգապահական պատասխանատվության ենթարկել սեռական ոտնձգություն իրականացրած անձին՝ տալով նրան գրավոր նկատողություն: Մեկ տարվա ընթացքում երեք նկատողություն ստանալու դեպքում անձին կարող են ազատել աշխատանքից:

Թեև սեռական ոտնձգության սահմանումը և արգելքը ամրագրվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքով մեր միասնական ջատագովության արդյունքում, սեռական բռնության ենթարկված անձանց համար դեռևս հասանելի չեն պաշտպանության արդյունավետ միջոցներ: Օրինակ՝ սեռական ոտնձգությունը չի ամրագրվել որպես աշխատանքային պայմանագրի լուծման հիմք, իսկ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը չունի գործատուների նկատմամբ հսկողություն իրականացնելու ոչ մի արդյունավետ լծակ:

Նման բացթողումները և թերությունները քննարկելու, հասարակությանը բարեփոխումների վերաբերյալ իրազեկելու, իսկ որոշում ընդունող մարմիններին նոր կարգավորումների մասին իրազեկելու և սեռական ոտնձգությանը վերաբերող նոր դրույթների կիրառման հնարավոր խնդիրների մասին բարձրաձայնելու նպատակով Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը և Կանանց ռեսուրսային կենտրոնը նախաձեռնել են մի շարք հանդիպումներ: Հանդիպումներից մեկն էր օրենքի ուժի մեջ մտնելուն ընդառաջ 2023թ.-ի հունիսին տեղի ունեցած «Աշխատավայրում սեռական ոտնձգությունների արգելքի նկատմամբ պետական վերահսկողությունը» թեմայով աշխատանքային քննարկումը, որին ներկա էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Առողջապահական և տեսչական մարմնի, արհմիությունների, գործատուների միության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, «Սոլիդարիթի» կենտրոնի և այլ կազմակերպություններից ներկայացուցիչներ: